

ՅՈՎՆԱՆՆԷՍ ԴՐԱՍԽԱՆԱԿԵՐՏՅՈՒ «ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ» ՃԱՌԸ

Գիտության և նրա ածանցեալ դասագրքային գրականության մէջ ընդունուած է համարել, թէ Ժ. դ. մարտնադիր Յովհաննէս Դրասխանակերպցոյ մեզ է հասել գրական երկու երկ. 1. ծառայուն «Պարմութիւն Նայոց», 2. համառօտ «Շար հայրապետաց Նայոց» ցանկ:

Վարդան Յունանեանի «Թուղթ քաջալերականում»¹ Վահան Սիւնի կաթողիկոսի (968-969) առիթով «Ի Տրամարան[ութենէ] ընդ Թէօրիանոսի իմաստասիրի» խորագրով աղբիւրից քաղուած է հետեւեալը. «Ձորմէ սուրբն Ներսէս Կալեցի այսպէս վկայէ. Յառաջ քան զԺամանակս երկերիւրից ամաց գոյր ոմն կաթողիկոս Նայոց, որոյ անունն էր Յովաննէս, ըստ վարոց և իմաստութեանն համանմանեալ մեծագունից և սրբագունից վարդապետաց, և յոյժ հմարացեալ ի գիտութիւն իմաստասիրութեան և ամենից արարաբնոց մակացութեանց... Եւ ահա առ իս է գիրգ մի այսր երանելոյ հօրս մերոյ, որ գրեցեալ ի նմանէ ընդդէմ միաբնակաց, որ լի է վկայութեամբ Սրբոց գրոց և զօրաւորօք պարճաւորօք և հաւաքաբանութեամբբ: Եւ երանելոյ յիշման Գրիգոր կաթողիկոսն, որ նստաւ սակաւ ինչ յառաջ քան զիս, հասարակեալ էր զնոյն գիրգն, և ի վերջ նորա գրեալ էր զայս. Ես այսպէս հաւաքամ, որպէս ամենասուրբ կաթողիկոսն Յովհաննէս գրեալ է աստ, և նզովեմ զայնոսիկ, որք նոյնպէս ոչ հաւարան»²: Ն. Աճառեանի կարծիքով՝ «Ըստ ժամանակագրական հաշուի այս Յովհաննէսը ակնարկում է Յովհաննէս Ե. Պարմարանիին»³: Գրիգոր վ. Մաքսուդեանը, սակայն, նկարել է, որ այս վկայութիւնը Դրասխանակերպցու հետ կապ չունի, որովհետեւ այսօրեղ «Յովհաննէս»-ը Վահան Սիւնիի երկրորդ անունն է⁴: Սրան աւելացնենք, որ Աճառեանի «հաշուի» մէջ նաեւ թուարանական մեծ անճշտութիւն կայ. Ներսէս Շնորհաւոր ժամանակից 200 տարի առաջը 970 թուականի շուրջ է, որ Դրասխանակերպցոյ բաւական յետոյ է և համապարասխանում է Վահան Սիւնիի տարիներին: Այսպիսով, կրկին արձանագրում ենք, որ Աճառեանի այս վերագրումն անհիմն է⁵:

Բոլորովին տարբեր է ներկայ շարադրանքի բուն շարժառիթ բնագիրը, որն, որպէս

1 Միսիթարեան միաբանութեան Վիեննայի մարտնադարանի ձեռ. № 12 և 39. «Յուցակ հայերէն ձեռագրաց մարտնադարանին Միսիթարեանց ի Վիեննա», Կազմեց Խ. Յակովբոս վ. Տաշեան՝ Միսիթ. ուխտէն, Տպագրեալ նպաստիւ Կայսերական Ընտարանի Գիտութեանց ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 107-16, 194 (այսուհետեւ՝ Տաշեան, Յուցակ):

2 Տաշեան, Յուցակ, էջ 109:

3 Տէն Ն. Աճառեան, Նայոց անձնանունների բառարան, հր. Գ., Եր., 1946, էջ 559 (Յովհաննէս Դրասխանակերպցի):

4 Տէն Hovhannēs Draskhanakertec'i, History of Armenia, Translation and Commentary by Rev. Krikor H. Maksoudian, Scholars Press, Atlanta, Georgia, 1987, p. 27.

5 Սակայն այս առիթով նկարենք, որ Վարդան Յունանեանի «Թուղթ քաջալերական»-ում օգտագործուած են 1680-ական թուականներին Արեւմտեան Նայաստանում նրա ուղեւորութեան ընթացքում հաւաքուած բազմապիսի աղբիւրներ, որոնց տեղեկութիւնների ուսումնասիրումը կարող է գիտական կարեւոր շար հարցերի պարասխան տալ, ուստի և վստահ ենք, որ, հեղինակի կաթողիկոսական աջաւորեան նկատմամբ անհրաժեշտ վերապահ վերաբերմութիւնով հանդէպ, պարզաձ ընկերութեամբ նրա այս երկի հրատարակումը մեր գիտութեան անհրաժեշտ անելիքներից է:

բանավեճի առարկայ մի յօդուածի⁶ յատկութեամբ և իբրև Յովհաննէս Օձնեցի Կաթողիկոսի (718-729 թթ.) գրչի արգասիք, առաջին անգամ 1896 թ. ապրիլին հրատարակել է Կարապետ վարդապետ (յետոյ՝ եպիսկոպոս) Տէր-Մկրտչեանը⁷: Ամփջապէս հետեւել է բանավեճի արձագանգ-պատասխանը. նոյն տարուայ «Բազմավեպ»-ի յուլիսի համարին կցուել է 20 էջանոց մի յատկութեամբ⁸, որի՝ «Շիրակացի» ստորագրած հեղինակ Ն. Մովսէս վ. Նազարեանը⁹ նախ կասկածի տակ է առել ճառի՝ Օձնեցունը լինելը, ապա հաւելել. «Իսկ այն հարցին, թե՞ ո՞վ է այդ կեղծ ճառի յերիւրողն, կարելի է պատասխանել թէ՛ հաւանօրէն Սիմէոն Կաթողիկոսն եղած ըլլալու է, որուն՝ իբրև կատարեալ Նաղբարացի վարդապետի, խոչընդակն էր Յովհ. Օձնեցին՝ իւր Ընդդէմ երեսօրականաց ճառի վարդապետութեամբը»¹⁰:

Անկասկած, պէտք է հասկանանք, որ Սիմէոն Երեսնցի կաթողիկոսի (1763-1780 թթ.) անունն այսպէղ յայտնուել է միայն չափազանցելու միտումով՝ պարզութեամբ դարձնելով այն հանգամանքը, որ ճառը պարունակող ձեռագրերն օրինակութեամբ են նրա կաթողիկոսութեան շրջանում: Այս «տեսակէտին» Կ. վ. Տէր-Մկրտչեանը պատասխանել է նախ վեճի թելադրած կրքով. «Մեզ մնում է տեսնել՝ զօրութիւն ունի Շիրակացու այն առարկութիւնը գտնել, թէ՛ «Օձնեցոյ ձեռն ու լեզուն այնքան կը փարբերին անծանօթի լեզուէն և ոճէն, որքան երկինք՝ յերկրէ»: Մենք լեզուագէտ չենք ևս անկողն եւս համարում լեզուի մասին վիճել մի մարդու հետ, որ «մեր դասական լեզուն լաւ հասկանալու վիճակի մէջ ըլլալը» չէ ընդունում. կիսողերնք միայն մեզ հաւասար հասկացողներին համեմատել մեր հրատարակած ճառի՝ մի կողմից Յ. Օձնեցու միւս ճառերի և միւս կողմից Սիմէոն Կաթողիկոսի գրածներին հետ և տեսնել՝ որպէղ է մերձաւորութիւնը և որպէղ՝ հեռաւորութիւնը»¹¹, ապա անկի զուսպ շարունակել. «Ենթադրել, թէ՛ «Ընդդէմ դաւանողաց մի-Քրիստոս յերկուս բնութիւն» ճառն ուրիշ Յովհաննէսի կամ մի ուրիշ հեղինակի գործ է և պատահաբար Օձնեցուն վերագրուած՝ այդ տարբեր է. դորա դէմ մենք բացարձակ առարկութիւններ չունինք, ինչքան ևս հիմունքից գուրկ լինի այդ ենթադրութիւնը, բայց նորա հեղինակը, ով կուզէ թող լինի՝ կեղծելու, իւր գրածներն ուրիշին ընծայելու մտադրութիւն չէ ունեցել, այդ հաստատապէս ասել կարող ենք. նորա մէջ կեղծիքի թերեւ նշան անգամ չկայ»¹²:

1896 թ. հրատարակուել է այս բնագրի նաև առանձնաւորի վարբերակը¹³, որն ըն-

6 Կ. վ. [Տէր-Մկրտչեան], Բնութեան խնդրի նկարմամբ մեր և Մխիթարեան հայրերի ունեցած հայեացքը.- Արարար, 1896, էջ 155-64: Մրա շարունակութիւնն է յաջորդը՝ «Կրկին բնութեան խնդիրը և Մխիթարեան հայրերը».- Արարար, 1896, էջ 353-64, երկուսն էլ վերահրատարակուած են՝ Կարապետ եպիսկոպոս Տէր-Մկրտչեան, Երկերի ժողովածու, Դրակ Ա., Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչութիւն, Ս. Էջմիածին, 2008, էջ 129-42 և 143-61. Կ. Տ.-Մ., ԵՃ. Ա. համաօրութեամբ այսուհետեւ յիշատակելու ենք այս վերջին տպագրութիւնը:

7 Յովհաննէս Բնաստատարի Նայոց կաթողիկոսի Խոստովանութիւն անշարժ յուսոյ մարմնաւորութեան Բնութեան, և ընդդէմ դաւանողաց զմի-Քրիստոս յերկուս բնութիւն. Յատկութեամբ «Արարար»-ի.- Արարար, 1896/Դ., էջ 192-199:

8 Շիրակացի, Յովհան Օձնեցոյ նորագիտութիւնն առթիւ. «Արարար» ամսաթերթին և «Բազմավեպ» հայեացքը մի բնութեան խնդրի նկարմամբ.- Բազմավեպ, 1896/Է., Յատկութեամբ, էջ 1-20:

9 Շիրակի Բաթթարոյ (ներկայ՝ Փանկի) գիւղում ծնուել է 1870 թ. (հայրը՝ Մկրտիչ), հետագայում հեռացել է միաբանութիւնից («հայրա», ե՞րբ), և վերջոյ՝ Ամերիկայի Քիվլէնը քաղաքում մահացել է 1934-ին կամ 1935-ին:

10 Բազմավեպ, 1896/Է., էջ 5. այս երկարաշունչ հակաճառութեան մէջ մեր բնագրի և Օձնեցու գործերի ոճական տարբերութեան շեշտումից բացի, բանասիրական հարցերի վերաբերող որեւէ բան չկայ:

11 Կ. Տ.-Մ., ԵՃ. Ա. էջ 154:

12 Անդ, էջ 150 (նոյնը՝ Արարար, 1896/Ը., էջ 359):

13 Յովհաննէս Բնաստատարի Նայոց կաթողիկոսի Խոստովանութիւն անշարժ յուսոյ մարմնաւորութեան

թերցելուց անմիջապես յետոյ Նորայր Բիզանդացին, ըստ ամենայնի պեղեակ լինելով նաև «Բազմավեպ»-ի 1896-ի յուլիսի Յանուարիին, Սյունիքումից 1897 թ. մարտին Թիֆլիսի «Մշակ» թերթին ուղարկել է հետևյալ նամակը. «Երեկ կարդացի զ«Յովհաննու Իմաստասիրի Նայոց կաթողիկոսի խոստովանություն անշարժ յուսոյ մարմնանալոյ Բանին Բրիսպոսի և ընդդէմ դաւանողաց զմի Բրիսպոս յերկուս բնութիւն», զոր հրապարակած է մեծ. Կարապետ վ. ի Կարաբանէ Էջմիածնի, 1896, արարարպետով «1896 թուի ապրիլ ամսի «Արարապ» ամսագրից: Նրապարակիչն, ինչպէս յայտ է ի յառաջաբանէն, առանց բնա վարանելոյ Յովհան Օձնեցի կաթողիկոսին կը վերագրէ զայս ճառ: Բայց ճառագրիս ոգին, վարդապետութիւնն և ոճն այնչափ հեռի են յոգոյ, ի վարդապետութենէ և յոճոյ Օձնեցոյն՝ որչափ երկինք յերկրէ: Այս ճառ է աներկբայ Յովհան Կաթող. Դրասխանակերպոցոյ (պարմագրին) գրութիւնն: Չը գիտեմ թէ ե՞ս եմ որ առաջին անգամ կը հրապարակեմ զայս: Եթէ այլք քան զիս յառաջ ցուցին թէ Դրասխանակերպոցին է հեղինակ ճառիս, և ոչ Օձնեցին, բարի է. իսկ եթէ ես եմ որ առաջին անգամ կըսեմ զայս, և եթէ փաստը ուզուին յինէն՝ թէ ինչու Դրասխանակերպոցոյն պէտք է վերագրել զայս ճառ, և ոչ Օձնեցոյն, պարապով կարող եմ հաստատել»¹⁴:

«Նանդէս ամսօրեան» 1897-ի մայիսին աննշան կրճատումներով անմիջապես արարարպետով է այս նամակը և Բիզանդացու՝ «Եթէ այլք քան զիս յառաջ ցուցին» խօսքի առիթով «բարի է» բայից յետոյ փակագծում աւելացրել. «կարծենք ցայժմ ցուցում չէ»¹⁵: Այսուհանդերձ, կարծում ենք, որ Նորայրը հեղափոխում այս հարցին անդրադառնալու առիթ չի ունեցել, որովհետև Դրասխանակերպոցունը համարած այս գործի մասին նրա Կարապետ գործերի և անպիպիւնների մանրամասն ցանկի¹⁶ մէջ որևէ ակնարկ չգտանք, սակայն իր նշանաւոր «Նախնիք»-ում այն կրկին և արդէն անվերապահօրէն համարում է նոյն հեղինակին. «Վերապայծառ փ. գերապայծառ. գերապայծառ Յով. կթ. Դրասխանակ. Խոստովանութիւն 4. վերապայծառ նոյն անդ 8. «վերապայծառ լոյս». վերապայծառ՝ Գաթրճեան Սրբազ. պարգմն. 335 ծ. 1: Չիք այլոր վերապայծառ»¹⁷:

Ճառի վերաբերեալ ԺԹ. դ. վերջերին գիտութեան մէջ բռնկուած այս բուռն քննարկումը շուրջով կարծես մոռացում է և ի յիշում միայն այլ առիթներով արուած հպանցիկ անդրադարձներով. Մ. արքեպս. Օրմանեանը, մանրամասների մէջ չմտնելով, առանց որևէ քննութեան, Ն. Բիզանդացու անունն իսկ չի յիշարակելով, այս ճառը նշել է Օձնեցու գրական

Բանին Բրիսպոսի և ընդդէմ դաւանողաց զմի Բրիսպոս յերկուս բնութիւն, Արարարպետ 1896 թ. Ապրիլ ամսի Արարապ ամսագրից, Նրապարակեց Կարապետ վարդապետ, Վաղարշապատ, Տպարան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, 1896, Ե., 30 էջ (փոքրադիր 17x12. գրադաշըր 12,3x8,2). այսուհետև՝ Առանձնադիպ:

14 Նորայր Ն. Բիզանդացի, Յովհան կաթողիկոս Դրասխանակերպոցոյ (պարմագրին) նորագիտը մէկ ճառն. Մշակ, 1897, 18 մարտ, № 32, էջ 2 (նամակը գրուած է Սյունիքում, 18/6 մարտ 1897):

15 Ծաղկաբաղ [՝ Վ. Գաթրճիկ Մէնէփիշեան], Ազգային թերթերէ ծաղկեփունջ. Նանդէս Ամսօրեայ, 1897/Ե., էջ 157: Նանդէս ամսօրեայի այս քաղումը որպէս Ն. Բիզանդացու յօդուած նշում է Օձնեցուն վերաբերող գրականութեան ցանկում (Մարենագիրք հայոց, Է. հատոր, Ը. դար, Անթիլիաս - Լիբանան, 2007, էջ 18), սակայն վստահ ենք, որ ցանկագրողը սա չի կարդացել, «յօդուած»ը նշել է սոսկ ըստ հետեւեալի՝ Նանդէս Ամսօրեայի յօդուածներու 100 փարուան մարենագիրական ցուցակ. 1887-1886, Կազմեց Վ. Օգոստինոս Վրդ. Մեղեան, Վիեննա, 1990, էջ 76բ: «Մարանագրքի» այս հատորում, բարեբախտաբար, խնդրոյ առարկայ ճառը չգտնուած չէ:

16 Տե՛ս Մ. Մինասեան, Նորայր Ն. Բիզանդացու կեանքը, հրապարակութիւնների և դիւանի ցանկը. Բազմավեպ, 1983/Ա-Դ., էջ 39-97 (հրապարակութիւնները՝ էջ 52-54, դիւանի ցանկը՝ էջ 62-96):

17 Նորայր Ն. Բիզանդացի, Նախնիք, Նրապարակութեան պարապարեց Մարտիրոս Մինասեանը, Ժնն, 1996, էջ 52:

երկերի շարքում՝ ասելով միայն, թե «վաղերական ճանչցում է»¹⁸, ժամանակ անց ճիշդ նույն ձևով է վարում նաև Ն. Աճառեանը¹⁹, իսկ նորերս մեր բարեկամ Գրիգոր Վ. Մաքսուդեանը էս, անելի շարքն ունի Մ. Օրմանեանի հեղինակության վրայ, Բիզանդացու վերագրումը չի ընդունել, հարցի նկարմամբ իր վերաբերմունքն արտայայտելով արտաբնագրական փաստարկներով՝ թե իբր Դրասխանակերպցին իր պարմության մեջ Քաղկեդոնի նկարմամբ այնչափ մերժողաբար չէ պրամադրում, որչափ թուացել է մինչև այժմ, թե խիստ խնդրական է, որ նա հեղափոխում է զբաղում լինի դառնաբանական և քրիստոսաբանական խնդիրներով, թե ըստ ոճի հեղինակային պարկանությունն վճռելու եղանակը զգուշալի է և այլն²⁰: Այսուհանդերձ, սրանց հակառակ, Օձնեցուն վերաբերող վերջին մեկնագրության²¹ մեջ այս ճառի մասին որևէ խօսք չկայ, ապա, ի վերջոյ, բնութեան խնդրի նկարմամբ Օձնեցի հայրապետի վերաբերմունքի վերջին քննությունը էսս հիմնում է միայն «Ընդդէմ երևութականաց» ճառի վրայ²²:

Նորայր Բիզանդացու բնագրական զգացողության նկարմամբ մենք անվերապահ հաւատաւ և համարում ունենք, ուստի, հիմնուելով նրա վստահ վերագրումի վրայ, խնդրոյ առարկայ ճառն այսպէղ վերստին փափագում ենք Յովհաննէս Դրասխանակերպցու անունով, իսկ նրա խոսքացած՝ «պարապով» անելի և չարած «հասարարումը», որ անպայման պէտք է լինի բառադարձութեան համեմատութեան գոգորդումներին²³ եղանակով, առայժմ թողնում ենք այլ առիթի: Ընդունելով, որ «Իմաստասէր» բառը միջնադարում Օձնեցուն պրում է ընդհանրացում մականուն էր՝ վստահ ենք, որ բառիս մակդրային կիրառութիւնը գրեթէ միշտ այնքան լայն է եղել, որ այն զուր և միմիայն Օձնեցու համար նախաբեռնած բառ-որակում համարելը սխալ է: Ուստի, եթէ անգամ ապագայում պարզուի, որ այս ճառը Դրասխանակերպցուն չէ, իր արժէքի համեմատ այն արժանի է վերստին շրջանառութեան մեջ դրուելու բնագրական առաւել ճշգրտութեամբ մշակումով:

Ճառի դառնաբանական կարեւոր արժէքը ցուցադրելու համար անհրաժեշտ ենք համարում Կ. Վ. Տէր Մկրտչեանից անել մէկ-կէկ փոքր քաղումք (Օձնեցի անունն նրա գործածումը, անշուշտ, համարելով պայմանական). «Օձնեցու մեր հրապարակած ճառը մի նոր, հասարարուն փաստ է», որ «նա երկու վրանգների մեջ մի միջին ճանապարհ է գրել և հայրերի աւանդութեանց վրայ հիմնուելով՝ ընծայել է ի նորոյ իր եկեղեցուն մի առանձնայաբուն բնաւորութիւն...»²⁴: Առանձնապիսի փոքրիկ առաջաբանում կրկին շեշտել

18 *Մաղարիտ արքայու. Օրմանեան*, Ազգապարտմ, Նայ ուղղափառ եկեղեցոյ անցքերը սկիզբէն մինչև մեր օրերը, յարակից ազային պարագաներով պարմում, հր. Ա., Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001, էջ 973, « 570:

19 Տէր Ն. Աճառեան, *Նայոց անձնանունների բառարան*, հր. Գ., Երևան, 1946, էջ 554 (Յովհաննէս Օձնեցի):

20 Hovhannēs Draskhanakertec'i, History of Armenia, Translation and Commentary by Rev. Krikor H. Maksoudian, Scholars Press, Atlanta, Georgia, 1987, p. 26-7.

21 Տէր Միկր Պապեան, *Յովհաննէս Բնասարասէր Օձնեցի. կեանքը և գործունէութիւնը*, «Ամբոց», Երևան, 1998 (135 էջ). թէն օգտագործում զբաղանութեան ցանկում ճառս պարունակող ձեռագրերի համարները յիշարակում են (ընդ էջ 115):

22 *Եզնիկ եպ. Պերոսեան*, Ս. Յովհաննէս Օձնեցու ուսմունքը Քրիստոսի բնութիւնների մասին. Մուրթ Յովհաննէս Օձնեցի հայրապետը և իր ժամանակը. 2003 թ. յունիսի 3-5, Նաղարարի վանք (Գիտութեամբ և խիստ), Ս. Էջմիածին, 2004, էջ 39-44:

23 Առայժմ նշենք մէկը, որ յարմար է գուցէ ոչ միայն Դրասխանակերպցուն. Խոսք. 108 «համարձակախառն Եսայիաս», Պարմ. ԽԵ. 17 «գհամարձակախառն Եսայիաս»:

24 Կ. Տ.-Մ., ԵԺ., Ա. էջ 136:

է բնութեան խնդրի ընկալման առումով նրա ունեցած մեծ արժէքը. «Այս ճառն ուրեմն առանձին կարեւորութիւն ունի այն փաստէն, որ նորա մէջ Նայոց եկեղեցւոյ դաւանութիւնն այս փափով խնդրում բացաւրուած ենք գտնում կրկին կողմերով՝ հակառակ միաբնակութեան և հակառակ երկաբնակութեան»²⁵: Կրկին Օձնեցուն նկարի ունենալով՝ գրել է, որ ճառի «արժէքն աւելի է մանաւանդ նորա համար, որ խօսողն այսպէղ Իմաստասէրի նման մի մեծ հայրապետ է՝ եկեղեցական հօր բոլոր հեղինակութեամբ, և նա խօսում է այնպիսի ազար ոգով և իր դիրքին ու իր անուան վայել ոճով, ջերմեռանդ հաւատարմութեամբ և ճշմարիտ աստուածաբանի բոլոր հմտութեամբ... Այս ճառի վերջաբանից կարելի է եզրակացնել, որ նա մի օրար համայնքի է ուղղում՝ գոյց իբրեւ դաւանութեան գիր...»²⁶:

Բնագրի ձեռագրերի մասին Կ. վ. Տէր-Մկրտչեանը յայտնել է բանավիճային իր առաջին յօդուածի մէջ. «Իմաստասիրի այս ճառը գտնուում է Մայր Աթոռի մարտիրոսաբանի երկու ձեռագիրների մէջ՝ հ. 58, եր. 144 շրջ. - 148 շրջ. և հ. 100 եր. 80-86 (Գեորգեան ժողովածու): Երկու ձեռագիրներն ևս նոր գրչութիւն են, հաւանականաբար երկրբեան Սիմէօն կաթողիկոսի ժամանակից, թէև միայն 58 հ.-ն ունի նշանակած. «Եւ օրինակեցաւ ի հայրապետութեան փեսան Սիմէօնի սրբազան կաթողիկոսի ամենայն Նայոց, ի Ս. Էջմիածին, ՌՄԺԶ. [1767] թուոյ, Մայիս Է.»։ Նոցա բովանդակութեան հիմնական մասը կազմում է «Թղթոց գիրք» կոչուած հեփաքքիթ ժողովածուն, որի մասին յոյս ունինք որիշ անգամ մանրամասն ծանօթութիւն փայլ. երբ առիթ լինի նորանից որիշ նութեր հրատարակել»²⁷:

Գեորգեան Տ^Թ 100-ը և 58-ը Մաշտոցեան Մարտիրոսաբանի ներկայիս Տ^Թ 2966 և 3062 ձեռագրերն են²⁸, որոնց յիշարակուած՝ համապատասխանաբար 80ա-86ա և 144բ-148բ էջերում, իրօք, առկայ է խնդրոյ առարկայ բնագիրը:

Բնագրի կազմութեան սկզբունքի մասին Կ. Տէր-Մկրտչեանի ծանուցումը բաւական սեղմ է. «Արդի հրատարակութիւնը կարարուում է 100 հ.-ի վրայ, միւսի համեմատութեամբ և միայն նորա ուշադրութեան արժանի փարբերութիւնները նշանակելով»²⁹: Ըստ այսմ՝ հրատարակութեան հիմքը եղել է Տ^Թ 2966 ձեռագիրը, որի ունեցածը պէտք է նայնութեամբ վերաբարդրուած լինի, իսկ Տ^Թ 3062-ի միայն «ուշադրութեան արժանի» ընթերցումները նշուել են փողպարակին (առաջին անգամ սրա ընթերցումը նշանակել է «Օր. 58», մնացեալ բոլոր փողերում՝ «Օր.» համառօտմամբ): Մեր համեմատութիւնները ցոյց տուցին, որ իրականութիւնը բաւական փարբեր է. նախ՝ փայագիրը ձեռագրերի աւանդած ձևերի համեմատ փարբեր է կամ շեղում է շուրջ հարիւր դէպքում (ընթերցումների մէջ փոխ S պայմանանիշով), ապա՝ երկրորդ օրինակի էական շարք ընթերցումներ ուղղակի անփոխուած և նշուած չեն, ի վերջոյ, սուրբգրական վկայութիւնների և քաղումների զգալի մասի հասցէն նշուած չէ: Այս կացութեան ենթադրական ամենահաւանական բացատրութիւնն այն է, որ նախ՝ երիտասարդ վարդապետը (ձեռնադրուել է 1895 թ. փետրուար 26-ին) բնագրական աշխատանքի մեծ փորձ չունէր, ապա՝ «Արարար»-ի նախարկութեամբ համարին հասցնելու ժամանակ, ու-

25 Առանձնափայ, էջ Գ.:

26 Անդ, էջ Դ.:

27 Կ. Տ-Մ., ԵԺ., Ա. էջ 141 (նոյնը՝ Արարար, 1896/Դ., էջ 163):

28 Գիտական գրականութեան մէջ յայտնի են «Էջմիածնի Գիրք թղթոց ժողովածուներ» ընդհանուր անունով (ի փարբերութիւն փայագրի հիմք՝ Անդրեան կամ Զմմաթի «Գիրք թղթոց»):

29 Կ. Տ-Մ., ԵԺ., Ա. էջ 141 (նոյնը՝ Արարար, 1896/Դ., էջ 163):

տի և շեղումների, սխալների ու վրիպումների մի մասը բնագիրը պարբերական անփորձության արդյունքն է, իսկ զգալի մասը՝ շարադրականության հետևանք: Վերջինս հասարակարարական է, որ ամսագրային տարբերակի որոշ վրիպումներ առանձնապիսի հրապարակության մեջ սրբագրում են (ընթերցումների մեջ տեղի ունեցող): Այսպիսով, այսպիսի գործածումը պայմանավորված է նրանց հիմքերով և:

Ա. Ձեռ. Ն^օ 2966 (Գ.100). ԺԷ. դ., Կ. Պոլիս, գրիչ՝ Ղուկաս երեց, 180 թերթ, թուղթ, 21x15,3. երկսիւն, նոսրգիր, 35 տող. մեր բնագիրը՝ 80ա-86ա (Ն^օ ԺԲ.): Շարադրական է, որ հենց այս ձեռագրի մեջ է նաև Դրասխանակերպոյ «Շարադրականագր» ցանկի մի օրինակը (87բ-9բ): Գրքության յիշարակարանը. «Արդ, գրեցաւ գիրքս ձեռամբ մեզ սաքաւալ Ղուկաս իրիցոյ, ի մայրաքաղաքն Կոստանդնուպոլսի, ընդ հովանեաւ Սրբոյն Գեորգայ եկեղեցոյն: Աղաչեմ զընթերցող հայրքդ՝ անմեղադիր լինել մերոյ պակասութեանս, զի օրինակն խիստ խրթին եղծուած էր: Միով Նայր մեղայի զանարժանս [յիշեցէք]. և դուք յիշեալ լիջիք ի միսանգամ գալստեանս» (153բ):

Բ. Ձեռ. Ն^օ 3062 (Գ.58). 1765-1767 թթ., Էջմիածին, գրիչ՝ Խաչատուր Կ. Պոլսեցի, սրբագրող՝ Աբրահամ վ. Աստուպարցի, 298 թերթ, թուղթ, 20,9x15,8. երկսիւն, նոսրգիր, 39-40 տող. մեր բնագիրը՝ 144բ-148բ (Ն^օ ԼԷ.): Լուսանցներում նշանակում են աստուածաշնչական գրքեր՝ բոլոր յիշարակում-վկայակոչումների հասցեները, օրինակ՝ 45ա «Սղմս. 51. 3» (տե՛ս բնագրի 18-րդ նախադասությունը):

Տ և Տ՝ - Կ. վ. Տեր-Մկրտչեանի տպագրի ամսագրային (Տ) և առանձնապիսի (Տ՝) տարբերակների ձևերը:

Բնագիրն ի նորոյ ըստ պարբերությունների տրոհել ենք ուղենիշ դարձնելով ձեռագրերում առկա գլխավորները, կերպարությունը ևս, մեր ընկալման համեմատ, համապատասխանեցրել ենք ներկայիս կանոններին: Սուրբգրական քաղածքների յղում-հասցեները լրացրել ենք մասամբ նաև հետևելով Բ. օրինակի լուսանցային նշումներին. մեր բնագրի ունեցած էական տարբերությունների դեպքերում տողաբանում բերել ենք Աստուածաշնչի ընկալելալ բնագրի համապատասխան կտորը: Այսպիսի մշակման բնագիրն այժմ շարադրական է, բան՝ նախորդ տպագիրը³⁰:

Այսպիսով, «վերագրում» ներկայ ճառը հրապարակում ենք ոչ միայն որպես Յովհաննես Ե. Դրասխանակերպոյի կաթողիկոսի (898-929 թթ.) գրչի երրորդ արգասիք, այլև որպես Քրիստոսի բնության խնդրի նկատմամբ Նայ Եկեղեցու վերաբերմունքն ամփոփող հիմնաքարային կոռմի շարադրանք, որ, պարզապես ինչ բացի, ուսուցողական և դաստիարակչական շարա մեծ արժեք ունի յարկապես նորահաս մեր եկեղեցականների համար³¹:

30 «Երկուս» բառի տառային համապատասխանությունը որպես ընթերցում չենք նշանակել. ամբողջն այս Է՝ 6 երկուս (Ա բն., ԱԲ բն.), 33 երկու (ԱԲ բն.). 36 գերկուս (ԱԲ գրան.), 37 յերկուս (Ա բն.), 42 երկուս (ԱԲ բն.), 43 երկուս (ԱԲ բն.), 46 երկուս (ԱԲ բն.), 49 գերկուս (Ա գր.), 55 երկու (ԱԲ բն.). 69 երկու (ԱԲ բն.). 77 յերկուս (Ա բն.), 119 երկու (Ա բն.):

31 Այս բնագրի անդրադարձանք Մայր Աթոռի հրապարակական բաժնի նախաձեռնած՝ «Արարարի ժառանգությունը» մատենաշարի համար «Արարարի բնագրերը» հատորը պարբերական առիթով, սակայն, ճառի դասանաբանական արժեքը նկատի ունենալով, որոշեցինք հատորից առաջ և առանձին այն ներկայացնել նաև «Էջմիածին» ամսագրի ընթերցողների ուշադրությանը:

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԻՄԱՍՏԱՍԻՐԻ¹ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ² ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ ԱՆՇԱՐԺ ՅՈՒՍՈՅ ՄԱՐՄԵԱՆԱԼՈՅ
ԲԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԸՆԴԴԵՄ ԴԱԻԱՆՈՂԱՅ ԶՄԻ ՔՐԻՍՏՈՍ
ՅԵՐԿՈՒՍ ԲԵՆԻԹԻՒՆՍ³

1 Զաստուածաբանութիւն⁴ աստուածածնելութեան Բանին Հաւր ո՛չ ոմանք ստորգհաւատոց⁵ այժմ ստորոգեն, զայն որ ի Հայրական ծոցոյ եւ ի թափանցիկ լուսոյ եւ ի գերազանցեալ փառացն ի թանձրագիտակ մարդկայինս բնութիւն ի խոնարհ թափեալ եւ քաղաքավարեալ յայտնեցաւ՝ պտղաբերել հիթանոսաց եկեղեցւոյ: 2 Եւ ո՛չ ուղղակի դաւանեն ըստ ինքնագիմարար Աւետարանին քարոզիցն, յորմէ հանդիպի Հաղորդութիւն մարդկութեանս առ աստուածութիւնն: 3 Եւ ո՛չ զաստուածային շնորհացն բազմապատիկ պարգեւս եւ զմեծ եւ զփրկական զխորհուրդն յինքեանս⁶ նախատպաւորեն: 4 Եւ⁷ ըստ գեղմանն⁸ անձրեւահոսցաւոյ⁹, որ ոռոգեացն զանպտղութիւն մարդկան ի կռապարիշտն երաշտութենէ¹⁰, բողբոջեալ բուրեն ընդհանրական եկեղեցւոյ, այլ քակեալ միանգամայն իսկ զհիմն ուղղափառ Հաւատոյ, եւ Հայեցեալք յայս մոլորութեան¹¹ եւ ի վարդապետութիւնս դիւաց, եւ Հարեալք իւրեանց խղճի մտաւք, զթանձր մաւրուս¹² յառաջ ձգեն, որ յաղաբողոնս պերճացեալ պաճուճին, եւ բարձրալանս պարծին ըստ սակի ամբարտաւանից, եւ զեղեղումն մտաց զինչկամութեան ի

գործ արկեալ, վրիպումն զլորման ճաշակեն, ո՛չ ստորաքննելով զթաքուցեալն¹³ ի նմա դառնագոյն քան զլեզլի մախանացն բոց¹⁴, յորմէ յղացեալ ծնանի նոցա զանազան եւ զտրամաբեր հերետիկոսութիւնս¹⁵:

5 Այսպէս աւտարացեղութիւն սոցա ի մէջ առեալ եւ յաւէտ բացընկեցիկ յուղղափառ աւանդիցն լեալ, եւ զհիւսակս երեքկդիս¹⁶ սուրբ ժողովոցն խզեալ¹⁷ հանգիսացեալ, որ ի Նիկիայ Բիւթանացոց սակս Արիոսի, եւ որ ի Կոստանդնուպոլիս վասն Հոգեմարտին Մակեդոնի, եւ որ յԵփեսոս՝ յԱսիայ յաղագս յիմարութեան Նեստորի, եւ մտախաբ իմացուածիւ ըստ գաւղաւնի աւցտողաց¹⁸ եւ ի բարւոյն վրիպեցուցանողաց հակաճառեն¹⁹ ընդդէմ ճշմարտութեանն ըստ նեստորականացն իմացմանց: 6 Եւ յետ անճառ միաւորութեան Բանին եւ մարմնոյն երկուս բնութիւնս բաժանաբար սահմանեն ի մի Տէր Յիսուս Քրիստոս, եւ²⁰ երկուս կամս եւ երկուս ներգործութիւնս, եւ ոչ մարդացելոյն Աստուծոյ ի սրբոյ Կուսէն խոստովանին զկիրս, այսինքն՝ զխաչ եւ զմահ, որ վասն յաշխարհի, այլ յատուկ մարդոյն միայնոյ. եւ եթէ չարչարեալն²¹ եւ խաչեալն²² ո՛չ է Տէր եւ ո՛չ Փրկիչ, եւ ո՛չ

1 Բ խմաստասիրի է

2 Տ կաթողիկոսի

3 Տ բնութիւն

4 Ա [զ]աստուածաբանութիւն

5 Բ հաւատոյ

6 Բ > յինքեանս

7 Տ > եւ

8 Տ գեղմանն

9 ԱԲՏ ցողոյ, Տ՝ ցողոյ

10 Բ երապոթենէ

11 Տ մոլորութիւն

12 ԱԲՏ մորուս, Տ՝ մորուս

13 Տ գթագուցեալն

14 Տ բաց] բոց

15 Ա հերետիկոսիւնս, Ա՝ հերետիկոսութիւնս

16 ԱԲՏ .գ.կդիս

17 ԱՏ խզել (Բ խզեալ)

18 Բ օցողաց

19 Տ հակաճառին

20 Տ > եւ

21 Տ զարշարեալն, Տ՝ չարչարեալն

22 Բ զխաչեալն

Աստուած եւ Որդի¹ Աստուծոյ: 7 Այսպէս ի ներքս² ի խորոջ անդ³ զմիտս ամբարշտութեան ցուցեալ՝ յափշտակեն զտկարս, զհտութեամբ ի հրապուրանս բանից արկանելով, եւ արբուցանեն կղերց եկեղեցւոյ զպղտորութիւն մոլորութեան եւ զհակառակաբանութիւնս յոչ ինչ պիտանացու: 8 Եւ զոր խարդախութեամբն թագուցանել⁴ համարին, զնոյն յայտնապէս ցուցանեն զմոլոր միտս եւ զհերետիկոս լեզուազարութիւնս, զոր ո՛չ ասել իսկ պարտ վարկանի եկեղեցի ուղղափառաց եւ ո՛չ լսել, վասն զի յաւէտ իմն հեռի եւ աւտար եւ ի բացեայ է յառաքելական վարդապետութիւնէ:

9 Սակայն մեք աստանաւր ոչ պարտիմք զլուծութիւն⁵ միայն պատուել, զի մի՛ ի հակառակացն⁶ մեղիցիմք, կամ թէ երկբանութիւն ինչ է մէջ անկցի կամ մեծաբանութիւն, կամ թէ պատճառս ինչ տրտնջման գտեալ, եւ եւս առաւել զհրաբորբն բղխեն⁷ չարութիւն եւ աճեցուցեն զգթոխըմբեր զգայումնն: 10 Այլ ընդզիմասցուք նոցա ուղղափառ հաւատոց մարտիւ եւ սանձահարեալ հանդիսացուք զխստերախ խարդաւանս հերձուածողութեանն⁸ եւ վերջատանջել զյոզնահոս եւ զբազմատարած գիշերամածն խաւար, զի թերեւս լրութիւն եկեղեցւոյ Քրիստոսի ըստ սրբոց հարցն աւանդից գերապայծառ եւ անշիջանելի փայլեսցէ, եւ ճշմարիտ հաւատոցն բարեմտութիւն ծաղկաւէտեալ⁹ բողբոջեսցէ, եւ բարբարոսական երկբայութիւն կամ տարահաճելի նսեմական ինչ թագուցեալ միտք ի բաց տարեալ տրոհեսցին:

եւ առհասարակ ամենեքեան ի մի առաւելութիւն պատուոյ թեւակոխեալ ելանիցեմք: 11 Այդ, այսուհետեւ ես աստ ո՛չ զհարուստ բանից պաճուճանս¹⁰ ինձ ինքն հայցեմ, այլ զաստուածաշունչ Գրոց սրբոց աներկբայ հաստատութիւն եւ զհարցն հաւատոց զաւանութիւնս, որ կարող են տապալել զբոլոր ամբարշտութիւնս եւ հաստատել զողջախոհ հաւատոցն խորհուրդս որ ի Քրիստոս:

12 Եւ նախ սկսայց՝ ուստի սկսանելն լաւագոյն է, եւ ասացից որ զմէնջ ամբաստանութիւնն ստոցն հերէսիտաց¹¹: 13 Զի միշտ հանդիսանան ստեղծանել յարել ի մեզ զչարահազագ մտածմանցն առարկութիւնս, որ ստորահոսեալն ի յանդուճս խաւարին տարտարոսին, եւ զմահորոճն է զգեցեալ թիւնս, զոր ո՛չ իսկ ամենին բնաւին գիտեմք, եւ անդր է քան զբնաւ ասելի մտածմունս մեր, եւ միայն ինքեանէ իսկ յառաջ բերի՝ թուլակի խորհրդոց յեղափոխումն, զի թերեւս զիւրեանցն կարասցեն կացուցանել եւ արբուցանել զչար ուղիսիցն¹² ամբոպս: 14 Եւ արդ, ա՛ւն, առեալ զարհամարհելիսն նոցա բանս ծիծաղելիս, յարկացուցից¹³ եւ տապալեցուցից ի զաւրութենէ պատրաստ աւգնականին մերոյ Քրիստոսի: Թերեւս եւ փոխեցից¹⁴ ձեզ շնորհս ինչ հոգեւորս՝ առ ի հաստատել զձեզ:

15 Ընդէ՛ր բնաւ¹⁵ ազատութիւնս մեր այսպէս գատիցի յայլոյ խղճի մտաց, որք անդուռն բերանով ասեն զմէնջ ասել յարեւաբար ի ձայնակցութիւնս¹⁶ Մանեա¹⁷ գոլ եւ Մարկոնի եւ Բարդեսծանի եւ Եւտիքեա: 16 Զի նոքա նմանութեամբ իմն ասեն եւ ստուերա-

1 Բ ոչ որդի

2 Բ > ի ներքս

3 Բ խորոջ ցանոյ

4 Բ թարբուցանել

5 Տ յուլթիւն

6 Տ հակառակաց

7 Ա բխեն

8 Տ երթնածողութեան

9 Տ ծաղկանեպեալ, Բ ծաղկանեպեալ

10 Բ պաճումանք

11 Բ երեւոյթաց

12 ԱԲՏ ուխիցն

13 Բ յարակացուցից

14 Բ փոխեցին

15 Տ բնաւ

16 Տ ձայնակցութեանց

17 Տ մանեա

կան Հանգամանաւք եւ կարծեաւք երեւել¹⁸ յաշխարհի զաշխարհափրկիչն¹⁹ Քրիստոս, եւ կամ թէ ըստ Վաղենտինոսի²⁰, որ ո՛չ ի Մարիամայ, այլ յիւրմէ բնութենէն շրջեալ եւ արարեալ ասէ Բանին իւր մարմին չարչարական: 17 Ո՛չ այգպէս ստգտանին²¹ միտք մեր ի միամտութենէն որ ի Քրիստոս. եւ որ այլազգ ունիցի ոք քան զեզեալն, որ է Յիսուս Քրիստոս, ի նմանէն ի բաց փախչիմք եւ աւտար վարկանիմք յԱստուծոյ եւ ընդհանրական եկեղեցւոյ: 18 Վասն զի որ ըստ Հարցն սրբոց եւս ուղղափառաց աւանդեցան մեծագոյն Հաստատութեամբ խոստովանութիւնք, ո՛չ տան մեղ թոյլ յերկրայս լինել կամ տարագրել²² ի ճշմարտութենէ անտի²³, կամ ի բղիժմանէ անտի²⁴ Հրաբորբոքն բարկութեան տոչորել²⁵, այսինքն՝ յանկարգ եւ յամբարիշտ եւ ի Հերետիկոս լեզուաց, որք «սիրեցին զհարութիւն քան զբարութիւն, զանաւորէնութիւն քան զխաւսս արդարութեան, եւ Հաճեցան ընդ խաւսս կործանման եւ զլեզուս նենգաւորս»^{26ա}:

19 Արդ, որք զԲանն Աստուած յեղափոխեալ ասացին ի մարմին եւ յոսկր, ի նեարգս եւ ջիւս եւ ի բովանդակ իսկ ի բնութիւն մարմնոյ, նոքին իսկ են, որ ընդ ամբարշտութեանցն կռապաշտեալ վայրագարկեցան եւ ընկճեալ կործանեցան: 20 Քանզի ո՛չ եթէ Բանին բնութիւնն²⁷ շրջեցաւ ի մարմին²⁸ եւ

յոսկերս, եւ ո՛չ եթէ ինքն յինքեան բնակեաց ի մերումն²⁹, այլ մարմին լեալ եւ բնակեաց ի մերումն³⁰ բնութեան, «զի ի Նմա բնակէ ամենայն լրումն աստուածութեանն»³¹ մարմնապէս»^{32բ}: 21 Սայապէս եւ որ Բանին Հաւր եւ որ ի Մարիամայ մարմինն էր՝ եթէ ասիցէ որ ի մի բնութենէ անգատին յառաջ եկեալ, ի նզովս ուղղափառ եկեղեցւոյ Հակամիտ գտանի: 22 Եւ որք ասենն, թէ պիտակապէս զնմանութիւն միայն, եւ ո՛չ զբնութիւն մերոյնս մարմնոյ զգեցեալ էր Տեառնն՝ ընդ անհաւատոս տուժեսցին:

23 Եւ որք ի բանս ապիրատս ախտաժեւտեն, թէ աստուածայինն³³ բնութիւն³⁴, որ էր Հաւասար Հաւր, առանձնակի թլփատեցաւ եւ կամ անկատար երբէք ի կատարելութենէ եղեւ, եւ կամ թէ ի խաչին բեւեռեալն ո՛չ էր մարմին Բանին, այլ նոյն ինքն Արարիչ բնութեանն, որ էր իմաստութիւն Հաւր՝ այնպիսիք պարտապանք եղիցին ընդ մծղնէս գրողի: 24 Ով ոք երբէք ի կղերիկոսաց եկեղեցւոյ այնպէս յանդգնեալ ժպրհիցի, կամ կշռադատիցէ³⁵ զինքն ի խորհուրդ Հար Հերետիկոսաց, մինչեւ ասել Հաւանիցի, թէ բնութիւն մարմնոյն³⁶ նախ քան զառնուլն ի Մարիամայ էր, եւ էր մարմին աներեւոյթ եւ անտես. եթէ այգպէս է, ապա Նա իսկ էր Բանն: 25 Եւ զարձեալ թէ մի բնութիւն էր Բանին եւ մարմնոյն եւ կամ թէ շրջեալ փոխեցաւ Բանն ի մարմին, ինքն ապա վասն իւր պատարագի եւ ո՛չ վասն աշխարհի, եւ զինքն միայն փրկէ եւ ո՛չ զբոլոր եղականս: 26 Ի բաց տարեալ՝ տրոհեսցի ի մէնջ այսպիսի զրէմխոխ եւ ապիրատ խորհրդոց առար-

18 Բ երեւեալ

19 Բ յաշխարհափրկիչն

20 Ա վաղէնտինոսի

21 ԱԲ ըստ գրանիին

22 Տ փարագրել

23 Ա անդի

24 ԱԲ անդի

25 Տ փոչորել, Տ՝ փոչորիլ

26 ա Սղմ. ԾԱ. 5-6 « սիրեաց զհարութիւն քան զբարութիւն, զանաւորէնութիւն քան զխաւսս արդարութեան: Սիրեաց նա զամենայն խաւսս կործանման, եւ զլեզուս նենգաւորս»

27 Տ բնութիւն

28 Բ միասին] մարմին

29 Բ > ի մերումն

30 Տ > այլ մարմին... ի մերումն

31 Տ աստուածութեան

32 Բ Կղս. Բ. 9

33 Տ աստուածային

34 Տ բնութիւն

35 Բ կռապաշտիցէ

36 Տ մարմնոյ

կուսածք:

27 Զի որ «զգաւակէն Արրահամու բուռն հարկանէր»³⁷, ուստի³⁸ պարտ իսկ էր նմա ամենայնիւ եղբարց նմանել՝ նոյն ինքն ի կուսէն³⁸ զմարմինն առեալ եւ միացուցեալ ընդ Բանին, որպէս եւ իւր իսկ վասն մեր զՆա պատարագէ, վասն զի Բանն Աստուած եւ Որդին ճշմարիտ, որ ի ճշմարտէ Հաւրէ ծնեալ յառաջ քան զամենայն յաւիտեանս, եւ բարձրեալ եւ ամենակալ եւ վերապայծառ³⁹ լոյս՝ ըստ որում եւ ծնաւդն, եւ նոյն ինքն զաւրուծիւն Հաւր եւ աջ եւ բազուկ եւ կարողութիւն եւ ճառագայթ եւ ծնունդ էութեան, եւ հանգոյն եւ հանգէտ զաւրուծեամբ, գործակցութեամբ ընդ Հաւր եւ ընդ Հոգւոյն Սրբոյ, Որդի⁴⁰ մշտենջենաւոր ի բնութենէ Հաւր: 28 Եւ մինն միայն յերկնցն առանձնացեալ զիմաց եւ ի նոյնացեալ բնութենէ եւ ի կամաց իսկապէս, եւ մի անշփոթ յերրորդութեանն անձնաւորութեանց իջեալ յերկնից, բնակեցաւ ի սուրբ յարգանդի կուսին Մարիամայ Աստուածածնին, եւ այսպէս ստուգապէս մարմնազգեստեալ եւ մարդ եղեալ, արար իւր ճանապարհ ի⁴¹ գալստեանն⁴² եւ յայտնութեան, որով մատոյց զինքն առ մեզ եղբարց նմանեալ, եւ եղեւ որդի Դաւթի, որդի Արրահամու:

29 Այսպէս ի կուսական յարգանդէ եւ յախեալ մաւրէ ծագեցաւ լոյս յաշխարհ, որ յառաջ քան զարուսեակ⁴³ ըստ ինքնաբարբառ Բանին, թէ «Ես լոյս յաշխարհ եկի»^{44ա}: 30 Ըստ սմին սակի եւ անհասանելին հասա-

նի, անճառելին քարոզի, անթարգմանելին թարգմանի, բարձրեալ⁴⁵ ի խոնարհ թափի, անսկիզբն սկսանի, անմարմինն մարմնանայ, Բանն թանձրանայ, երկնաւորն երկրաւոր լինի, հոգեղէնն՝ հոգեղէն, անրեւոյթն՝ երեւոյթ, հինաւուրցն՝ աղայ⁴⁶: 31 Այսպէս իսկ Աստուածն յաւիտեանական, միակն եւ անմատոյցն, ինքնագոյնն եւ ինքնիշխանն, մին⁴⁷ յերրորդութենէն, ծնունդն Հաւր «խոնարհեցոյց զերկինս եւ էջ»^{48բ} եւ մարդացեալ մարդկապէս եւ զկերպարանս ծառայի զգեցեալ, ընդ մարդկան շրջեցաւ, անբաժ ի հայրական ծոցոյ: 32 Եւ ըստ աւրինացն կատարեալ զոյն իսկ զսա դաւանէ եկեղեցի հեթանոսաց, ո՛չ աստուածութեանն միայն, քան զոր ո՛չ ինչ է կատարեալագոյն, այլ եւ վասն մարդկութեանն աւծելոյ աստուածութեամբն եւ եղելոյ, որ ինչ էլաւծն. եւ համարձակիմ ասել՝ զոյգ Աստուած ասէ զսա աստուածաբանութիւնն Գրիգորի:

33 Քանզի Աստուած ճշմարիտ անմարմին ի մարմնի երեւեալ լինի կատարեալ ճշմարտութեամբ եւ աստուածային կատարելութեամբ. ո՛չ երկու դէմս եւ երկու բնութիւնս, քանզի ո՛չ⁴⁹ գոյ հնար քառս երկրպագել⁵⁰ ասել զԱստուած եւ զՈրդի Աստուծոյ, եւ զմարդ եւ զՀոգի սուրբ: 34 Սակս որոյ եւ նզովէ ոմն ի սրբոց զայնպէս ամբարշտեալսն, որք մարդ յաստուածային փառաբանութեանն⁵¹ դնեն: 35 Դարձեալ ինքնին իսկ Տէրն փառաց զհամազար եւ զհամապատիւ շնորհս մարմնոյն միաւորութեան ինքնաբուն իմն ընդ ինքեան ասէ՝ իջեալ յերկնից ըստ անքակ միաւորութեանն⁵², թէ՛

37 Գ Երբ. Բ. 16

38 Տ կուսէն

39 Նխնթ.52.սրբգ. գեղապայծառ] վերապայծառ

40 Բ > որդի

41 Տ եւ ի

42 ԲՏ գալստեան

43 Տ գալստեան

44 ա Յովհ. ԺԲ. 46 «Ես լոյս յաշխարհ եկի». Հմմտ. Յովհ. Գ. 19 «զի լոյս եկն յաշխարհ», Յովհ. Ը. 12 «Ես եմ լոյս աշխարհի», Յովհ. Թ. 5 «Մինչդեռ յաշխարհի եմ, լոյս եմ աշխարհի»

45 ԱԲ բարձրեալ (Տ բարձրեալն)

46 ԱԲՏ փղա

47 Տ > մին

48 Բ Մաղմ. ԺԷ. 10

49 Բ > ոչ

50 Տ երկրպագեալ

51 Տ մարդոյ աստուածային փառաբանութեան

52 Տ միաւորութեան

«Ես եմ հացն իջեալ յերկնից»⁵³։ 36 Եւ այսպէս ասի երկրորդ Ադամ⁵⁴ եւ մարդ երկնաւոր երեւեալ յաշխարհի⁵⁵, զի անմահ⁵⁶ եւ անապական էութիւն Բանին խառնեալ ընդ ապականացու եւ մահկանացու գոյութեանս, եւ վեհագոյնն ընդ վատթարագոյնիս զուգամասնեալ՝ զերկուսն ի մի գոյացոյց, յեղափոխեալ ի ծայրագոյնն բարի, եւ անապական կազմեալ աստուածացոյց։

37 Իսկ ապա յետ միաւորութեանն, որպէս ի բաց բարձելոյ յերկուս հատմանն՝ մի գոյ պարտիմք⁵⁷ հաւատալ զՈրդւոյ⁵⁸ բնութիւն⁵⁹, որպէս միոյ, սակայն մարմնացելոյ եւ մարդացելոյ։ 38 Այսպէս բացեալ մեր զուշ մտաց մերոց ի տեսութիւն աստուածային խորհրդոյս, զերկուցանեմք⁶⁰ արտայայտելով մարմնականացս զմարմնաւորութիւն անհիւթականն⁶¹ Բանի՝ զնոյն⁶² ինքն զանշփոթ եւ զանբաժ⁶³ միաւորութիւն զուգականութիւն երկաքանչիւրոցն անփոփոխելի բնութեանց ի մի բնութիւն շարադրեալ, զուգընթաց երկնաւոր գոյականութեանն⁶⁴, վասն զի բոլորն⁶⁵ Աստուածն Բան զբոլորս մարդ առեալ հոգով բանականաւ եւ մտաւք եւ բովանդակ ամենայն կարեաւք, բաց⁶⁶ ի մեղաց, զի զբոլորն մեզ շնորհեսցէ փրկութիւն։ 39 Եւ այսպէս երկաքանչիւրոցն բնութեանց եւ կերպարանաց ի մի յատկական անձնաւորութիւն ընթացեալ, կատարին

ի մի գէմ եւ ի մի բնութիւն, մի Որդի, մի Քրիստոս, մի Տէր՝ միով երկրպագութեամբ պատուեալ։ 40 Զի ըստ որում եւ անբաժանելի⁶⁷ Որդի երկրպագութեամբ ի համապատիւ Երրորդութենէն, սայապէս եւ անբաժանելի⁶⁸ յինքեան մարմնոյն համապատիւ⁶⁹ երկրպագութենէ։ 41 Այսպէս մեք ըստ սիւնհոգոս ժողովոյն, որ անուանի զուգաճանապարհ, խոստովանիմք զՈրդին Աստուծոյ՝ զձեռնալն ի Հաւրէ միածին եւ զնոյն միածին ի սրբոյ կուսէն Մարիամայ, եւ ի մի ածնմք եւ ո՛չ զերկուս⁷⁰ որդիս անուանեմք, այլ մի, եւ զնոյն նոյնացեալ միով բնութեամբ եւ անբաժանելի աստուածութեամբն, եւ միով պատուով երկրպագեալ։ 42 Իսկ առ որում թագուցեալ⁷¹ է ճշմարտութիւնն առաջին եւ զաւրացեալ այժմու մոլորութիւնս, որ զգրեալսն ծածկեն եւ զինքնիմաց տարասութիւնսն ասել հրամայեն, որ ո՛չ ունին զարժանն. ի գէպ առ նոսա բերի առաքելոյ բանն, թէ «Զարմանամք, թէ այնպէս վաղվաղակի փոխիք յայնմանէ, որ կոչեաց զձեզ ի շնորհս Քրիստոսի, յայլ աւետարան, որ ո՛չ թերեւս գոյ այլ, բայց եթէ իցեն ոմանք, որ խռովեցուցանել հնարին զմանկունս մաւր Սիոնի եւ կամ յեղափոխել զԱւետարանն Քրիստոսի»⁷²։ սակայն եւ յայսմ ոչ աղքատացի որ մեծատունն է։ 43 Եւ արդ, հարցեալ զմեր⁷³ ժողովարանս Քաղկեդոնի, որ ըստ տաւմարին Լեւոնի⁷⁴ գաւառս կրեն,

53 * Յովհ. Զ. 41

54 Տ անգամ] ադամ

55 Բ աշխարհի

56 Բ անմահն

57 Տ պարմիմք

58 Ա գորոյ

59 Տ օծութիւն] բնութիւն

60 Բ գեկուցանեմք

61 Տ անփոխական

62 Տ ի նոյն] զնոյն

63 Տ զանբաժան

64 Տ գոյականութեան

65 Բ գրոյորն

66 ԱՏ բայց (Բ բաց)

67 Բ անբաժանելի է

68 Տ անբաժանելի է

69 Բ > երրորդութենէն սայապէս... համապատիւ

70 Ա բն, Բ բն (= երկուս)

71 Բ թաքուցեալ

72 * Հմմտ. Գղտ. Ա. 6-7 «Զարմանամ զի այդպէս վաղվաղակի փոփոխիք յայնմանէ որ կոչեաց զձեզ ի շնորհսն Քրիստոսի՝ յայլ աւետարան. որ ոչ գոյ այլ. բայց եթէ իցեն ոմանք որ խռովեցուցանիցեն զձեզ, եւ կամիցին չընել զաւետարանն Քրիստոսի»

73 Բ > զմեր

74 Բ քոմարին եւ Լեւոնի

թէ՛ զաւրպիսի⁷⁵ ոք⁷⁵ ստորոգեն բան զԲանէն կենաց՝ այսպէս յայտնապէս ասեն զինքնիմաց⁷⁶ որոճումն⁷⁷ բանից ձերում. զի չէ ստորոգեալն, թէ՛ մի գէ՛մ է Բանին⁷⁸ մարմնացելոյ, եւ մի անձն եւ երկուս բնութիւնս բաժանաբարս եւ անհաղորդս միմեանց ի միում գիմի: 44 Եւ ահաւասիկ տեսանեմք ըստ բարեպաշտութեան քրիստոսեան հաւատոյն՝ ամենայն իւրք, ամենայն ուրեք, ո՛չ երբէք⁷⁹ երեւեալ բաժինք⁸⁰ անմահ բնութեան Բանին եւ նորին եւ մարմնոյն: 45 Եւ նախ յարտաքնոցն քերթողածաղիկ փիլիսոփայից այս տեսցի, որք յաղագս բաժանման եւ ապացուցի սոցայցն տեսութեանց համառաւտ բնձեռնութիւն առնելով փորձեցան եւ զգէ՛մ ի բնութեան գոյ ասացին ենթակայացեալ՝ ըստ մեծի պիտեցելոյ խուզման եւ ըստ բոլոր յեղանակի, եւ ամենայն իրաւք իրազգած լինին բնութեան զգէ՛մ պարունակեալ, եւ ո՛չ թէ՛⁸¹ գիմի զբնութիւն:

46 Իսկ եթէ՛ այս⁸² այսպէս է, որպէս եւ է իսկ, անհնար է ապա ի միում գիմի երկուց բնութեանց գոյանալ, եւ հարկ է երկաքանչիւրոցն բնութեանց երկուս գէ՛մս միանգամայն շարագասել: 47 Եւ այնուհետեւ նեստորաբար իմանի նոցա զնել գիմակս ընդգէ՛մ երից սրբոց ժողովոցն ողջախոհ եւ միատարր խոստովանութեան: 48 Եւ յետոյ թերեւս ի զղջումն եկեալ, կամին ընդ նեստորի զոչ ուղղագոյնսն չարափառապէս յանձն առնուլ եւ տեղի տալ, քաջ ախորժելով եւ չորրորդութիւնն յերրորդութիւնն փառաբանութիւն մուծանել: 49 Դարձեալ թէ՛ եւ զերկու բնութիւնսն բռնազբաւսաբար

ի միում գիմի ախորժեն յարակայել, ո՛չ ինչ այնպէս թերեւս կարիցեն ցուցանեն կատարելութիւն ի նմա: 50 Զի թէ ի կուսէն ծնեալ⁸³ այլ ոմն, եւ այլ յերկաքանչիւրսն բաժանաբար իմանի, եւ ո՛չ նոյն ինքն Աստուած կատարեալ եւ մարդ կատարեալ միով բնութեամբ, ապա ի միում գիմի միւսն միումն⁸⁴ տէր հանդիպի գոյ, եւ միւս՝ ծառայ: 51 Եւ որպէս այս ըստ նոցա իմանի՝ ասացուք:

52 Գրեալ է, եթէ՛ «Հանէր Յիսուս զգիշերն ի գլուխ յաղաւթան Աստուծոյ»^{85ա}: 53 Արդ, արդեա՞ւք ի միում գիմի բնութիւնն մարդկային զբնութիւն Բանին աղաչէ՛ր՝ զի մի՛ մատնեսցի խաչին. թէ՛ այդպէս է, պարտ է⁸⁶ զի մի բնութիւնն տէր միւսոյն, եւ մինն՝ ծառայ յարմարեսցի: 54 Եւ այսպէս խորհողն⁸⁷ յերևոյթն ածէ, թէ ի միում գիմի⁸⁸ մարդկայինն բնութիւն զաստուածայինն աղաչէ՛ր, այսինքն թէ՛ ինքն⁸⁹ զինքն, եւ այսպէս յաւէտ իմն ի բացեալ ի ճշմարտութենէն բերի, եւ միայն ի հրապուրանս զպարզամիտսն արկանէ: 55 Դարձեալ, գիա՞րդ ի միում գիմի երկու բնութիւն ասի ապտակիլ եւ խաչիլ⁹⁰. եթէ՛ այդպէս է, զմի գէ՛մ որո՞ւմ⁹¹ յերկաքանչիւրոց⁹² կամին խոստովանել՝ աստուածութեա՞նն, եթէ՛ մարդկութեանն: 56 Եթէ՛ աստուածութեանն զաւանեն⁹³, զմարդկայինն կորուսանեն զգէ՛մ, եւ եթէ՛ մարդկութեանն, ապա այսպէս աւտարութիւն իմն արկանեն ընդ Աստուածն Բան եւ ընդ իւր մարդկութիւնն՝ որպէս ի մարգարէ կամ յայլ

83 Բ ծնեալն

84 Բ եւ միումն

85 ա Ղ. Զ. 12

86 S ~ զի մի մարմնացի խաչին. թէ այդպէս է՝ պարտ է, բանին աղաչէր

87 S խորհողն

88 Բ > դիմի

89 S > ինքն, S՝ զինքն

90 Բ ապտակիլ եւ խաչել

91 Բ ~ որում զմի ում

92 Բ յերկաքանչիւրոցն

93 Բ դաւանին

75 Բ ոք որ

76 Բ զինքն ի միաց

77 S որոճումն (վրէպ), S՝ որոճումն

78 Բ > թէ մի ում է բանին

79 ԱՏ երբէք (Բ երբեք)

80 Բ բաժին

81 Բ եթէ

82 S > այս

ոմն արդար երբեմն բնականաբար եւ երբեմն գնացեալ: 57 Ապա ըստ սմին սակի եւ ընդ մեզ եւս է մինչ ի կատարած աշխարհի: 58 Եւ այսպէս դարձեալ յորոշել զիմաց Երրորդութեանն՝ տարրորդ ընդ նոցա ցուցանի Բանն Հաւր: 59 Եւ դարձեալ նոքին իսկ ոչ զԱստուած պարտին ասել խաչել վասն աշխարհի, այլ մարդ սոսկ, եւ միայն յարեւութեամբ առ Բանն մերձեցեալ, եւ զփրկութիւն մարդկան մարդով եղեալ եւ ոչ Աստուծով՝ որպէս Նեստորի եւ Թէոփորիտայ եւ Պատրեայ Սամոսացոյ⁹⁴ հաճոյ թուի: 60 Ապա ժամ է նոցա աստանաւր զաստուածաբանութիւնն Ազիագեանն⁹⁵ Գրիգորի ունայնաբանութիւն իմն եւ յոչինչ պէտք վարկանել, զի ի մեղադրութիւն մատուցեալ նոցա ասէ. Հի՞ մ մերժէք ի լինելոյ⁹⁶ Աստուած ճշմարիտ զայն, որ ի կուսէն ծնեալ ճշմարտապէս Աստուած եւ Հարչարեալ: 61 Եւ այլուր, թէ՛ Որ ոչ խոստովանի զխաչեալն զոյ Աստուած, նզովեալ կարգեացի ի ընդ աստուածասպանսն: 62 Եւ դարձեալ, թէ՛ Զի՞նչ քան զայս Հրաշափառագոյն զԱստուած խաչեալ տեսանել եւ գնոյն ընդ աւագակսն, եւ մերձ անցաւ դացն⁹⁷ ծաղր լեալ, անըմբռնելոյ, եւ քան զկրել ինչ ախտս բարձրագունին: 63 Եւ այլուր, թէ՛ Արիւն Աստուծոյ եւ Հարչարանս եւ մահ լսելով, մի՞ ի վայր անկցիս անաստուածաբար իբրեւ Աստուծոյ ջատագով⁹⁸: 64 Եւ արդ, ի բաց այսուհետեւ ի մէնջ տարամերժեալ զտարահաճելի սասանող⁹⁹ ընկղմելութիւնս բանից: 65 Այսպէս ինձ իմա՛ զուղղափառ Հաւատոցն¹⁰⁰ դաւանս, սակս միոյ Հաւր Բանին, որ «փոխանակ ամենեցուն մե-

ռաւն»¹⁰¹, վասն զի ի մարմնին իւրում, զոր առ ի կուսէն, անքակ միացաւ, եւ միանալն յայտնապէս ցուցանէ զբնութեանցն անքակութիւն եւ զմիութիւն: 66 Այսպէս իմա՛ զԲանն մարմին եղեալ եւ բնականաբար ի մեղ. ո՛չ եթէ շրջել ինչ կամ յեղափոխեալ ի մարմին, այլ մարմին վասն մեր միացուցեալ իւր՝ Բան Աստուած եղեւ մարդ ճշմարտապէս, եւ ոչ կարծիս¹⁰² ունելով, ո՛չ որդեգրութիւն իբրեւ զմեզ, այլ բնութեամբ միացուցեալ իւր զմարմինն, եղեւ մի Տէր, մի Աստուած Յիսուս Քրիստոս: 67 Ո՛չ ի կատարումն ինչ Բանն մարմին եղեւ, զի կատարեալ Երրորդութիւնն ո՛չ ընդունի զյաւելուած եւ ո՛չ¹⁰³ թերութիւն, որ միշտ ի կատարելութեան իւրում է, այլ մարդկութեան բնութեանս եղեւ յաւելուած¹⁰⁴ Հաղորդութեան եւ միաւորութեան¹⁰⁵ Բանին: 68 Եւ այսպէս նովին մարմնովն վերացեալ, անց ընդ զբունս երկնից եւ ելեալ նստաւ ընդ աջմէ մեծութեանն ի բարձունս: 69 Իսկ որք ո՛չ այսպէս ընդ մեզ Հաւասարեալ դաւանեն զՔրիստոս ըստ մարմնոյ, որ է¹⁰⁶ ի վերայ ամենեցուն՝ Աստուած աւրհնեալ յաւիտեանս, այլ երկու ասեն բնութիւնս՝ Հարկ է նոցա զմինն երկրպագել ի ասել եւ զմինն ո՛չ, եւ ապա¹⁰⁷ յաստուածայինսն¹⁰⁸, որ երկրպագելին է, մկրտիլ¹⁰⁹, իսկ ի մարդկայինսն ոչ մկրտիլ: 70 Իսկ եթէ «ի մահ անդր նորա մկրտեցաք»¹¹⁰ ըստ գրեցելումն, ապաքէն մի պարտ է¹¹¹ խոստո-

94 Ա սամոսպացոյ, Բ սամոսպացոյ

95 Տ ազիագենն, Տ՝ ազիագեանն

96 Բ լինելոց

97 ԲՏ անցողացն

98 Բ ջատագով

99 Բ սասանող

100 Տ հաւատոցն

101 Բ. Կրնթ. Ե. 14

102 Տ կարծես, Տ՝ կարծիս

103 Բ > ոչ

104 ԲՏ յաւելուածս

105 Բ միաւորութեանն, Տ դաւանութեան] միաւորութեան

106 Տ եւ] է, Տ՝ է

107 Բ > ապա

108 Բ աստուածայինսն

109 ԱԲ մկրտել

110 Բ Հռմ. Զ. 3 «որ միանգամ մկրտեցաք ի Քրիստոս Յիսուս, ի մահ անդր նորա մկրտեցաք»

111 Բ պարտի

վանել բնութիւն զանախտակիր աստուածութեանն¹¹² եւ զախտակիր մարմնոյն, որով մեռան վասն մեր: 71 Քանզի ի մահ նորա մկրտութիւն, ի մարմնոյ յարութիւն եւ ի թողութիւն մեղաց լինի տուեալ: 72 Մահ ասացին նմա Գիրք, այլ ո՛չ խախտումն եւ ապականութիւն, զի մարմին¹¹³ ապականացու ի ձեռն զաւրութեան Բանին եղեւ անապական, եւ յաղթահարեցաւ մահ ի բնութեան մարմնին մահկանացուի: 73 Այսպէս մեք զԱստուած ասեմք խաչեալ ի Հրէից՝ եւ ո՛չ զմարդ միայն եւ ո՛չ զԱստուած միայն, այլ զմարդ եւ զԱստուած: 74 Դարձեալ չիք հնար մահ ասել Աստուածն Բանի, բայց եթէ ի մարմնի ըմբռնեցի, եւ չիք հնար անմահ լինել մարդոյս¹¹⁴ բնութեան, բայց եթէ Աստուած մարդացի: 75 Եւ այնուհետեւ պարտ է ամենայն իրաւք, զի վասն անմահին մահկանացու անմահացի, եւ վասն մահկանացուի Աստուած իւր զմահն համարեցի¹¹⁵: 76 Այսպէս յերկուց¹¹⁶ բնութեանց մի բնութիւն Բանին մարմնացելոյ խոստովանի ամենայն աստուածասէր հոգի. ըստ որում եւ միտք մարդոյ ո՛չ բաժանի յիւրմէ մարմնոյն, այլ մի գէմ, մի բնութիւն բովանդակ մարդն: 77 Քանզի յերկուց միացեալ՝ որպէս մի ճառեմք զԱստուած Բանն, մարմնով իւրով չարհաւեալ վասն մեր: 78 Համայն ո՛չ եթէ զբեւեռն ընդ մարմնոյն ի զաւրութիւն Բանին մտանել ասեմք, որ եւ ո՛չ ի հոգի մարդոյն: 79 Զի թէ հոգի մարդոյ ոչ ըմբռնի, ապա ո՛ր չափ եւս առաւել զաւրութիւն Բանին: 80 Եւ թէպէտ եւ¹¹⁷ հատանի ոտն մարդոյ, զհոգին ո՛չ կարէ կաղացուցանել, եւ թէ զաչս ոք խլէ, զոգին ո՛չ կարէ կուրացուցանել, այլ

հոգւոյն աչաւք յոլովագոյնս տեսանէ: 81 Եւ զարձեալ հոգւոյն¹¹⁸ ընդ մարմնոյն մեռանել ամենայն աստուածաշունչ Գիրք ո՛չ առնուն յանձն՝ ըստ տէրունեան¹¹⁹ բանին, թէ «Մի՛ երկնչիք յայնմանէ որ սպանանին զմարմին եւ զոգի ոչ կարեն սպանանել»¹²⁰ս. վասն զի յորոշել հոգւոյն¹²¹ մեռանի մարդն, սակայն հոգին որ ի նմա ո՛չ ի կորուստ ինչ, այլ ի դադարս իւր մեկնի¹²² կենդանի:

82 Այսպէս Հաւր անապական Որդին ո՛չ մեռանի ընդ մարմնին իրոյ, այլ ի ձեռն անապական մահուն իրոյ զառ ի մեղ մահն խափանէ, եւ զոմանս արգեամբք յարութեան եւ զոմանս աւետեաւք կենդանիս առնէ, եւ զապականեալ ստեղծուածն նորոգէ եւ հանէ ի փառս մարմնոյ իրոյ: 83 Դարձեալ ինքնին¹²³ Տէր բարձրութիւն զխաչն անուանէ եւ ի նմանութիւն ինքեան բերէ զառ ի Մովսէսէ եղեալն¹²⁴ աւճն պղնձի¹²⁵բ. զի անդ խորհուրդ զուշակման, եւ աստ յայտնութիւն ճշտութեան ի ներքս մտեալ անէ (°). զի որք ըստ մարմնոյ, եւ զմարմնաւորութիւն Բանին միայն տեսանէ ի խաչին, ըստ աւրինակի սակի որ յանապատի անդ, նոքին իսկ յերկրայութեան թեւաւաւորութեանն մեռեալ լինին հոգւով¹²⁶: 84 Իսկ որ ո՛չ զմարմինն եւեթ միայն զգալի աչաւք տեսանեն, այլ ընդ նմին մարմնոյն եւ զաներեւոյթ աստուածութիւնն իմանալի աչաւք իմանան՝ սեւեռալ ի խաչին, ո՛չ մեռանին նոքա երկմտութեամբ զմահն մշտնջենաւոր, այլ հաւասարեալ ընդ մեղ

112 Տ աստուածութեան

113 Բ մարմնի

114 Բ մարդ՝ այս] մարդոյս

115 Ա համարեացի, Ա՛ համարեացի

116 Բ երկուց

117 Բ > եւ

118 Ա հոգոյն

119 Բ փերտեակաւն

120 Ս Մով. Ժ. 28

121 Ա հոգոյն

122 Տ մեռանի] մեկնի

123 Տ ինքն

124 Բ եղեալ

125 Բ Հմմտ. Յովհ Գ. 14

126 Ա հոգով

ասասցեն, թէ խաչեալն¹²⁷ է Աստուած, եւ ընդ խաչելոյն յառնեն¹²⁸ որպէս եւ նա յետ¹²⁹ երից աւուրց: 85 «Զի եթէ մինն փոխանակ ամենեցուն մեռաւ, ապա ուրեմն¹³⁰ ամենեքեան մեռեալ էին¹³¹, եւ ի վերայ ամենեցուն մեռաւ, զի որ կենդանիքն իցեն, ո՛չ միայն անձանց եւեթ իցեն կենդանիք, այլ այնմ՝ որ ի վերայ նոցա մեռաւ եւ յարեալ»^{132ա}:

86 Արդ, այսպէս անչարհարելի եւ¹³³ անմարմին Բանն Աստուած ի մարմնի գոլով, ո՛չ է մարմին նոյն ինքն Բանն, այլ մարմին է Բանին ընդ ինքեան միացուցեալ, եւ սակա այսորիկ իւր իսկ հաշուեալ համարի զիւրոյ մարմնոյն¹³⁴ չարհարանս, եւ ինքն աներեւոյթ եւ անչարհար է: 87 Սակայն եւ անշաւափն եւ անըմբընելի զաւրութիւն Բանին, ըստ իւրոման հաշուելոյ զկիրսն, ասէր մարգարէիւն. «Զթիկունս իմ ետու ի հարուածս եւ զծնաւտս իմ յապտակս¹³⁵, եւ զերեսս իմ¹³⁶ ո՛չ դարձուցից յամալութոյ ընդ երեսս թքանելոյ»^{137բ}: 88 Այսպէս նոյն ինքն¹³⁸ Բանն Բանին աստուածեղինի զմեզ ընդունիչս արարեալ, ինքն ի չարհարելումն անչարհարական իմանի, եւ միացեալ ի չարհարականին մարմնի՝ ջնջէ եւ ապականէ զտկարութիւն ապականութեան մարմնոյն, եւ զգեցուցանէ զանապականութիւն եւ զգաւրութիւն: 89 Եւ այնուհետեւ ո՛չ կարողանայ մահկանացուս զանմահն ի մահ գրաւել¹³⁹, այլ անմահին զմահ ի բաց

ջնջեալ, զմահկանացուս ընդ անմահին միաբանէ միով բնութեամբ, եւ անմահ յարգարէ, եւ մարմնովն իւրով զայսպիսի անմահութիւն մեզ շնորհէ ըստ առաքելականդ բանին, թէ «Պարտ է ապականացուի¹⁴⁰ այս զգեցուց զանապականութիւն, եւ մահկանացուիս այսմիկ՝ զանմահութիւն»^{141գ}: 90 Իսկ թերեւս ասիցէ որ, թէ ոչ է զաւրութիւն եւ բան Հար ի խաչելութեանն¹⁴², ասեմք, թէ այո՛ էր, ո՛չ զբեւեռս չարհարանացն կրեալ¹⁴³ կամ զխոցումն գեղարգեանն, այլ կենդանի միշտ գոլով, կրեաց մարմնով¹⁴⁴ զչարհարանսն, եւ անարգանք խաչին համարեցաւ Տեառն փառաց: 91 Ո՛չ թէ զԲանն խաչեցին, այլ զԲանն անարգեցին եւ զմարմին Բանին ի խաչին բեւեռեցին, զի Աստուած էր, որ անարգեցաւ, եւ հոգւոյ եւ մարմնոյ Աստուծոյ եղեւ չարհարանքն եւ մահ եւ յաւրութիւն: 92 Թքին ընդ երեսս եւ ծեծեցին¹⁴⁵ եղեգամբ զգլուխն. ազգ ցաւոցն¹⁴⁶ մարմնոյն, եւ անարգանքն զաւրութեան բանին համարեալ եղեն: 93 Ո՛չ նուազեցաւ լոյսն, եւ ո՛չ շիջաւ¹⁴⁷ արդարութեան Արեգակն, այլ դադարեաց¹⁴⁸ միայն ի չարժելոյ զմարմինն եռաւրեայ թաղմամբն. «Իշխանութիւն ունիմ, ասէ, զնել¹⁴⁹ զանձն իմ եւ իշխանութիւն ունիմ առնուլ զնա»¹⁵⁰: 94 Ամենայնիւ յամենայնի բաւական էր. ի դժոխս էջ, այլ զմեռեալսն արտաքս եհան ի բան-

127 Տ խաչիւալն

128 Տ յառնին

129 ԱՏ ետր (Բ յետր)

130 Տ ապա եւ յ ապա ուրեմն

131 Բ մեռեալ էին (վրէպ)

132 ա Բ. Կրնթ. Ե. 14-16

133 Տ > եւ

134 ԱՏ մարմնոցն (Բ մարմնոյն)

135 Բ ապրակս

136 Տ ... յ ապրակս եւ զերեսս իմ

137 Բ եսայի Ծ. 6

138 Բ > ինքն

139 Բ գրաւել

140 Տ ապականացուիս

141 Գ Ա. Կրնթ. Ժ. 53

142 Տ խաչելութեան

143 Բ կրեաց

144 Բ մարմն

145 Բ ծեծելին

146 Բ ցաւոյն

147 ԱՏ զիջաւ (Բ շիջաւ)

148 Տ դադարեալ

149 Տ անել յ զնել

150 Ա զսա, ԲՏ զնա: Յովհ. Ժ. 18 «Իշխանութիւն ունիմ զնել զնա. եւ իշխանութիւն ունիմ միւսանգամ առնուլ զնա»

տէ¹⁵¹, եւ ի տանէ կապանաց ի դախտն չոգաւ, այլ¹⁵² զաւագակին զաւետիսն հաստատեաց: **95** Քաղցեալ, այլ զհինգ հազարս¹⁵³ յերիս գարեղէն նկանակէ կերակրեաց. ծաւաւեցաւ, այլ զշուրն կենդանի Սամարացւոյ կնոջն արբուցանէր. վաստակեցաւ, այլ պարաբառնայր զտաժանմանն լուծութիւն գարշապարաց մերոց, որ ի թիւնարերան թշնամւոյն. չարչարեցաւ, այլ խրատ խաղաղութեան մերոյ ի նմա, եւ նորա վիրաւքն բժշկեցաք ամենեքեան¹⁵⁴: **96** Խաչեցաւ, այլ որ կայրն մեզ հակառակ¹⁵⁵ եբարձ գայն ի միջոյ եւ բեւեռեաց ընդ խաչափայտն. եղեւ վասն մեր անէծք, այլ զմեր անէծքն յանձն իւր ընկալաւ եւ ընդ մեր անիծիցն պարտուց ինքն չարչարեցաւ. մեռաւ, այլ ի ձեռն մահու Տեառն մահ մեռաւ, եւ կեանք թագաւորեցին. յարեալ եւ ընդ ինքեան յարոյց զմեռեալս յԱդամայ եւ կենագործեաց ի կեանս անմահս: **97** Սակայն այսպէս գոլով ի մարմնի, ո՛չ կորոյս զանմարմնականն, այլ կաց մնաց որ ինչ էրն, եւ եղեւ որ ինչ ոչն էր: **98** Եւ թէպէտ կարող էր ազատել զմարմինն իւր յամենայն կարաւտութեանց, սակայն լծեաց զնա ընդ լծով կարաւտութեան եւ թոյլ ետ մարմնոյն զիւրսն կրել: **99** Եւ այս յայտնի աճմանէն եւ ի զարգանալոյն է նորա, ի տրտմելոյ ոգոյն¹⁵⁶ մինչ ի մահ, յասելոյն թէ «Մարմինս տկար»¹⁵⁷ է, ի ցուցանելոյ գերկիւղ մարդկեղէն բնութեանն, ի քրտանէն որ իջանէրն, յըմբռնելոյն¹⁵⁸ ի վիրացն, յապտակացն, ի չարչարանացն¹⁵⁹, ի մահուանէն

եւ յայլ¹⁶⁰ ինչ խոնարհագունից, որ մարմնոյն բնութեանն¹⁶¹ են նշանակիչք, զի յայտնապէս ցուցցի մարմին եւ հոգի եւ միտք եւ ամենայն ինչ, որ է մարդ¹⁶² ճշմարտապէս եւ ո՛չ կարծեալք: **100** Այսպէս մեռաւ նա ճշմարտիւ, որպէս զմարդ ճշմարիտ, եւ չմեռաւ ճշգրտիւ՝ որպէս Աստուած¹⁶³. զի ո՛չ կորոյս¹⁶⁴ զանմարմնականն եւ զաստուածականն, վասն զի մի զաւրութիւն իսկութեան Հաւր է եւ մի իմաստութեան տէրութեանն: **101** Բան անըմբռնելի, լոյս անգննելի, պարզ իբրեւ զծնաւոյն, ծածուկ իբրեւ զՀայր, աներեւոյթ յաներեւութէ, լոյս ի լոյս, Աստուած յԱստուծոյ, անբաւ, անհաս, անչափ, անանց, անժամանակ, անսահման, անեղ, անարատ, անսկիզբն, անկատարած, անճառ, անքննին, անտես, անգննելի, անյաւղ, անչարժ, անբովանդակելի, մեծ քան զամենայն եւ հզաւր¹⁶⁵ քան զբնաւս, կարող ամենայնիւ¹⁶⁶ եւ բաւական ամենեցուն, եւ ամենակալ ի վերայ ամենայն երեւելեաց եւ աներեւութից: **102** Այսպէս է¹⁶⁷ հաւասարութիւն աստուածային Բանին Հաւր ո՛չ անկեալ¹⁶⁸ առանձնաբար ընդ չարչարանաւք, այլ զմարմնոյն իւրոյ չարչարանս իւր վարկեալ, վասն զի Աստուծոյ մարմին էր, եւ ինքն յիւրումն¹⁶⁹ ամբողջ կացեալ միացեալ, եւ յորմէ ծնեալն էր՝ ընդ նմին անբաժանելի եւ ընդ նմին յաւիտեանական է: **103** Յերկրի ընդ մարդկան չընցաւ եւ յերկինս աթոռ իւրում էր, ի վերայ խաչին բեւեռեալ եւ ընդ աջմէ Հաւր նստէր, ի գերեզմանի եղեալ եւ ի ծոցոյ Հաւր ոչ մեկ-

151 ԱԲ Բանդէ, Տ Բանդէն

152 Բ այլ + գառաջինն

153 ԱԲ գ. եռ. ս

154 ^ա ես. 53. 5

155 Տ՝ հակասակ (վրէպ)

156 Բ սգոյն] ոգոյն

157 Բ Մաթ. ԻԶ. 41, Մրկ. ԺԴ. 38

158 Բ յըմբռնելոցն

159 Բ > ի չարչարանացն

160 Տ այլ

161 Տ Բնութեան

162 ԲՏ՝ ի մարդ

163 Բ գաւորուած

164 Տ կկորոյս (վրէպ)

165 Տ > հզաւր

166 Տ ամենայնից

167 ԲՏ > է

168 Տ անանկեալ

169 Տ յիւրում

նեցաւ, այլ եւ ոչ թերեւս ի մահկանացու մարմնոյն: 104 Այսպէս իմասցիս ի վերայ Քրիստոսի զաստուածութեանն բնութիւն, զիւր գերազարգ գերունականութիւն անուշահոտ բուրելով աշխարհի:

105 Իսկ յաղագս սրբասացն կցորդի, որ ըստ եռակի անուանցն¹⁷⁰ մարմնացելոյ Բանին ի վերայ բերեմք զնաչեցարն՝ այսպէս ոմանց իմանի, թէ սուրբ Երրորդութեանն զխաչն սահմանեալ կամ կազմել¹⁷¹ ախորժեմք: 106 Թէ այդպէս է, յիրաւի խորշին եւ մերժին ի մէջ իմաստունքն յունաց, որք առեալ կատարեալ իմաստութիւնն¹⁷² անհանճարք եղեն, սակայն ըստ հաճոյական եւ իւրեանցն մտացածին բարուց ո՛չ կարեն զմեզ մերձ կացուցանել առ հերձուած¹⁷³, զոր ո՛չ է ծանուցեալ մեր: 107 Վասն զի յեկեղեցիս սրբոց ոչ Երրորդութիւնն թերեւս զայս փառաբանութիւն վերաձայնեալ մատուցանեմք, այլ Որդւոյ¹⁷⁴ միայնոյ. զի որպէս զմարդանալն ի կուսէն Որդւոյ¹⁷⁵ միայն¹⁷⁶ հաւատամք, սայապէս եւ զխաչն եւ զմահ Որդւոյ¹⁷⁷ խոստովանիմք: 108 Այսպէս եւ համարձակախաւսն Եսայիաս¹⁷⁸ յաթոռ բարձրութեան եւ վերացելոյ զՈրդի տեսանէ նստեալ¹⁷⁹, եւ նմա սրովբէագոչ ձայնն զերեքսրբեանն¹⁸⁰ աղաղակեալ սրբասացութիւնս ըստ Որդւոյն¹⁸¹ Որոտման Յովհաննու աւետարանութեանն, թէ «Վասն այսորիկ ոչ

կարէին հաւատալ» ի Յիսուս, զի¹⁸² «կուրացոյց զաչս նոցա եւ ապշեցոյց զմիտս նոցա», եւ թէ «Զայս ասաց Եսայի, զի ետես զփառս նորա եւ խաւսեցաւ վասն նորա¹⁸³»: 109 Եւ այսր աղագաւ միանգամայն իսկ երիս սրբասացութեամբ զՈրդի փառաբանեմք խաչին խորհրդով. ըստ որում եւ Իգնատիոս¹⁸⁴ հետեւողն առաքելոց տեսանէ զաւրս երկնաւորս, զի ի վերայ Որդւոյ¹⁸⁵ զնոյն¹⁸⁶ սրբասացութիւն ընծայեցուցանէին, այսինքն՝ Տեառն փառաց ի խաչ ելելոյն: 110 Եւ ըստ սմին սակի ամենայն եկեղեցիք Քրիստոսի ի ժամ սրբոյ պատարագին զերիս սրբասացութիւնսն ի վերայ Որդւոյ¹⁸⁷ կանոնալ¹⁸⁸ երգեն ցնծութեամբ եւ ուրախութեամբ¹⁸⁹: 111 Եւ սուրբ Հայրն մեր եւ ծնաւդն ըստ Աւետարանին Գրիգորիոս աստուածահրաշ պատգամացն վարդապետութեամբ զսոյն երիս¹⁹⁰ անուանակոչութիւնս ի վերայ միոյ Քրիստոսի սահմանէ. Տեսանե՞ս, ասելով, զի «Աստուած» եւ¹⁹¹ «Հղաւր եւ անմահ եւ Հայր Հանդերձելոյ աշխարհին»¹⁹² զայս աւրածին մանուկս անուանէ, զոր եւ ուղղափառ դաւանողք¹⁹³ զերիս անուանսս զայսոսիկ մի մի ի վերայ յարաբարելով՝ միոյ մարմնացելոյ բանին, ամենայն շունչ բարեբանէ յասել¹⁹⁴ անդ սուրբ Աստուած զՈրդի եւ սուրբ Հղաւր զՈրդի, եւ սուրբ անմահ զՈրդի, որ խաչեցար վասն մեր, զի ողորմեսցի մեզ մարդասիրաբար զանմահն Աստուածն Բանի, եւ

170 Բ անուանց

171 Տ կազմեալ

172 Տ իմաստութիւն

173 Տ հերձուածն

174 Ա որդոյ

175 Տ որդոյ

176 Տ՝ միայնոյ

177 Ա որդոյ

178 Տ Եսայիաս

179 ^ա Եպ. Զ. 1 «տեսի զՏէր նստեալ յաթոռ բարձրութեան եւ վերացելոյ»

180 Ա զ.գ.սրբեանն

181 Ա որդոյն

182 Բ > զի

183 ^բ Յովհ. ԺԲ. 39-41

184 Ա ինգլիսարիտս, Ա՝ իգլիսարիտս

185 Ա որդոյ

186 Տ նոյն

187 Ա որդոյ, Տ որդայն

188 Բ կանոնեալ են

189 Բ > եւ ուրախութեամբ

190 Ա Էր իս, Բ Էր ի սա] երիս

191 Բ > եւ

192 ^գ Եպ. 9. 6

193 Բ դաւանողք

194 Բ յասելն

զխաչեցարն ըստ մարդկութեանն միում¹⁹⁵ անձին եղելոյն: 112 Իսկ զկնի բանն, թէ Լի է ամենայն երկիր փառաւք նորա՝ ըստ ուղղափառ դաւանութեան եկեղեցւոյ այսպէս իմանի, թէ Երրորդութեանն փառաւորութիւն յերկրի ի ձեռն մարդանալոյն Տեառն ծաղկաւէտեալ ճոխանայ, ըստ որում եւ Տէր իսկ առ¹⁹⁶ Հայր ասէր, «Ես զքեզ փառաւորեցի յերկրի¹⁹⁷, յայտնեցի զանուն քո մարդկան»¹⁹⁸: 113 Եւ զարձեալ Հայր ցորդի¹⁹⁹, թէ՛ «Փառաւոր արարի եւ զարձեալ փառաւոր արարից»²⁰⁰: 114 Այսպէս փառաւորութիւն մարդանալոյն Տեառն ի փառաւորութեան Երրորդութեանն²⁰¹ միաւորեալ ցուցանի, զի միութիւն երրեակ, եւ երրեակ ի միութիւն կատարի: 115 Այսպէս մեք յետ երրեկի սուրբն ասելոյ, Անմահ խաչեցար ասեմք անմահ Աստուածն Բանի, եւ խաչեցար նորին²⁰² մարդկութեանն՝ միում անձին եղելոյ, եւ որոշեալ զիմաց անձնաւորութեանն²⁰³ Որդւոյ ի Հաւրէ եւ ի Հոգւոյն սրբոյ, եւ զնոյն խաչին նմին իսկ փառս անուանեմք. որպէս եւ²⁰⁴ ինքնին իսկ աղաւթէր, թէ՛ «Փառաւորեալ՝ զիս, Հա՛յր, փառաւքն, զոր ունէի յառաջ քան զլինիլն»²⁰⁵ աշխարհի առ ի քէն»²⁰⁶: 116 Ո՞չ ապաքէն աւասիկ խաչն է փառք. Եհաս, ասէ, ժամ, զի փառաւորեցի Որդի մարդոյ: 117 Եւ զարձեալ, եթէ՛ «Փոքր մի խոնարհ քան զհրեշտակս» տեսանեմք զՅիսուս, վասն չարչարանաց խաչին «փա-

ռաւք եւ պատուով պսակեալ»²⁰⁷: 118 Արդ, այսպէս մեք միայնոյ Միածնի Որդւոյն²⁰⁸ մարմնացելոյ Որդւոյն զխաչեցարն դաւանեալ²⁰⁹ երգեմք, որ անհասանելին է գիտութեամբ եւ արարչութեամբ ընդ Հաւր եւ ընդ Սուրբ Հոգւոյն, որ ընդ աջմէ Հաւր նստի միացելով մարմնով իւրով, եւ դատաւոր է եւ ժառանգ, եւ միայն ի սկզբանէ առ Աստուած՝ Բանն Աստուած եւ լոյս ճշմարիտ: 119 Իսկ որք ոչն ախորժեհ զմարմինն Քրիստոսի ի փառս Երրորդութեանն²¹⁰ բարձրացուցանել, եւ ոչ զԱստուած ասեն խաչեալ, այլ մարդ սոսկ, եւ զատանեն զՅիսուս ի Քրիստոսէն²¹¹, եւ երկու անձինս յայտնեն՝ զոմն չարչարելի եւ զոմն անչարչարելի, եւ ո՛չ ասեն զՄիածին Որդին Աստուծոյ, միացելով մարմնովն²¹² իւրով խաչեալ եւ չարչարեալ եւ մեռեալ եւ յարուցեալ²¹³ եւ նստեալ ընդ աջմէ Հաւր՝ ո՛չ է նա այն, որ անուանեալն կոչի, այսինքն՝ քրիստոնեայ, եւ ըստ Պաւղոսի՝ «Կրիցէ դատաստանս, ո որ եւ իցէ»²¹⁴: 120 Իսկ մեք յաւէտ յարմարական եւ յիրաւի եւ վայելուչ գոլ ասեմք զսրբասացութիւնսն միոյ յանձնաւորութեանն յԵրրորդութենէն՝ մարմնացելոյ Բանին, որ է մի Տէր Յիսուս Քրիստոս, որով ամենայն. որ փառաց եւ զաւրութեան զՔրիստոսոզ անուն յինքն պարունակէ, որ ո՛չ սոսկ մարդ, այլ Տէր փառաց, որ վասն մերն²¹⁵ խաչեցաւ, որ ո՛չ թեւ եւս այլ ինչ²¹⁶ փառաբանութիւն ի ներքս բերի, որով փառաբանի խաչեալն, եւ այլ՝

195 Բ մերում, Բ՝ միում

196 Բ > առ

197 Տ յերկրի + եւ

198 ⁹ Յովհ. Ժէ. 4, 6

199 Տ գորդի

200 ^ա Յով. ԺԲ. 28

201 Տ երրորդութեան

202 Տ > նորին

203 Տ անձնաւորութեան

204 Տ > եւ

205 Տ զլինելն

206 ⁹ Յովհ. Ժէ. 5

207 ⁹ Երբ. Բ. 7

208 Ա որդոյն

209 Տ դաւանալ

210 Տ երրորդութեան

211 Բ քրիստոսէ

212 Տ մարմնով

213 Տ յարեալ

214 ⁹ Ա. Կրնթ. ԺԱ. 29 «Զի որ ուտէ եւ ըմպէ անարժանութեամբ, դատաստանս անձին իւրում ուտէ եւ ըմպէ. զի ոչ խորէ զմարմինն Տեառն»

215 Տ մեր

216 Բ այլ ինչ <այլ ինչ>

որով փառաբանի Բանն յերրորդութեանն, որում «կրկնի ամենայն ծունր երկրնաւորաց եւ երկրաւորաց եւ սանդարամետականաց»²¹⁷;

121 Այսպէս եւ զայս սակաւութիւն ինչ ձեզ հարկեցայ գրել, զի մ'ի լուծեամբ²¹⁸ տրտմեցուցից զձեզ. ազաչեմ զի աստուածասիրաբար, բարեկամութեամբ եւ իմաստակիր մտաւորութեամբ ընկալիք զառի յինչն ասացեալսգ. եւ եթէ զիր բանիդ²¹⁹ տգիտաբար ինչ լսելեաց ձերոց ծեփցի²²⁰, զհասարակաց մարմնոյս բնութեան տկարութիւն եւ զտգիտութիւն ծանուցեալ չնորհեցէ՛ք մեզ: 122 Եւ թէպէտ եւ իմս ըստերիւրին իմացմունք, այլ հաւատամ ոչ միտել կամ թիւրեմ²²¹ սրտից ձերոց, որ էք իսկ հաստատուն²²² սիւնք եկեղեցւոյ, այլ ախորժաբար եւ բարեքապէս խրատել²²³

եւ յանդիման կացուցանել զասումն ասաւդիւն²²⁴, եւ «սրտիւ հաւատալ յարգարութիւն եւ բերանով խոստովանիլ ի փրկութիւն»²²⁵, զի հաւատովք²²⁶ փառաւորեսցի ամենեցունցն Աստուած, եւ ո՛չ քննութեամբ ինչ ի վերայ բնութեան աստուածութեան²²⁷ հասանել²²⁸ խրոխտիցիմք: 123 Այսուհետեւ կրճիմն բարձցի եւ ցանկն²²⁹ քակեսցի²³⁰, եւ միջնորմն յատակեսցի, եւ իւրաքանչիւր ոք ի մէնջ հաստատեսցի ի մի նոր մարդ, յոր կոչէաք²³¹ ծննդեամբ սուրբ աւագանին, եւ աղաւթանուէր բանն տէրունեան²³² ի մեզ յարագրեալ ներգործեսցի²³³. Թէ՛ «Որպէս ես, Հայր, ի քեզ, եւ Դու ի²³⁴ յիս, կամիմ զի²³⁵ եւ սոքա ի մեզ իցեն»²³⁶: 124 Այսպէս եղիցուք կատարեալք ի մի ամենայն հաւատացեալք մարմնացելոյ Բանին կենաց. եւ փառս տալուք Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն²³⁷:

224 ԲՏ ասողիս

225 ^ա Հռոմ Ժ. 10 «Զի սրտիւ հաւատալք յարգարութիւն, եւ բերանով խոստովանիք ի փրկութիւն»

226 Տ հաւաքով

227 Տ աստուածութեան

228 Տ հասեալ

229 Տ գանձն, Տ՝ ցանկն

230 Բ > եւ ցանկն քակեսցի

231 Տ՝ կոչեցաք

232 Տ քրիստոնական

233 ԱԲՏ յարադրեալն էր գործեսցի

234 Տ > ի

235 Տ > զի

236 ^բ Յովհ. Ժէ. 21 «որպէս դու Հայր յիս՝ եւ ես ի քեզ, զի եւ նոքա ի մեզ իցեն»

237 Ա հոգ՝, Բ հոգւոյն + սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտեանից. ամէն: Զայս թողթս սուրբն Ներսէս Լամբրոնացի եպիսկոպոս քաղաքիս Կոնստանդնուպոլիս հրամանաւ Գրիգորի կաթողիկոսի եւ Լեւոնի բարեպաշտի աղբալին:

217 ^կ Փղ. Բ. 10 «Զի յանուն Յիսուսի Քրիստոսի ամենայն ծունր կրկնեսցի, երկնաւորաց եւ երկրաւորաց, եւ սանդարամետականաց»

218 Բ լատիներէ] լոյսեամբ

219 Տ բանից

220 Բ ծեփեսցի

221 Բ միարիկ կամ թիւրիկ

222 Բ հաստատունք

223 Տ խրատեալ